

Արձանագրություն N 5
բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով
գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.09.2022թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին
Նիստը նախագահող՝
Հանձնաժողովի անդամ
Հանձնաժողովի քարտուղար՝
Բացակայում էր հանձնաժողովի
նախագահ՝

Ա. Զոհրաբյան
Տ. Սարգսյան
Ա. Համբարձումյան
Յ. Ասատրյան

1. Ընթացակարգի շրջանակներում 07.09.2022 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

- 1.1 Հաշվի առնելով հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահել է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ Ա. Զոհրաբյանը:
- 1.2 «ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հետևյալ հարցումը.

Հարցադրում.

ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-22/321 մրցույթի 2-րդ չափաբաժնով պահանջվող թվային շարժական ռենտգեն համակարգի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Անողի ջերմունակությունը, առնվազն՝ 56,000ՋՄ»: Որքան մեծ է այս պարամետրը, այնքան ռենտգեն խողովակի անողի հովացումը ավելի արագ տեղի կունենա: Ձեր կողմից պահանջվող ռենտգեն սարքի խողովակը և գեներատորը ներկառուցված են մեկ կաղապարում/կորպուսում(շատ մոտավոր չափերը՝ 400x200x200մմ), ուստի թե՛ ռենտգեն խողովակը, և թե՛ գեներատորը արձակում են ջերմություն, որը պետք է նվազեցվի որքան հնարավոր է շատ, որպեսզի միավոր ժամանակում հնարավոր լինի ավելի շատ ռենտգեն նկարահանումներ կատարել առանց երկար սպասելու մինչև ընդհանուր ռենտգեն սարքի հովանալը: Վստահ ենք, որ դուք հիվանդների հոսքի և ռենտգեն նկարահանմանը պատրաստվելու ժամանակի մասին ունեք տեղեկություն, օրինակ՝ ռենտգեն օպերատորին միջինը պահանջվում է 5 րոպե, որպեսզի չափի պացիենտի հասակը(հասակաչափով) և քաշը(կշեռքով), ծրագրում գրանցի պացիենտի բոլոր տվյալները(առնվազն՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, քաշ, հասակ), նկարի պացիենտին ապահով հեռավորությունից, ստանա պատկերը աշխատանքային կայանի վրա, մշակի պատկերը, չափումներ ու գրառումներ անի, ուղարկի DICOM կամ այլ ֆորմատով համապատասխան բժշկին և պատրաստի մյուս պացիենտին նկարահանման: Խնդրում ենք փոխարինել «Անողի ջերմունակությունը» պահանջվող պարամետրը միավոր ժամանակում հիվանդների ռենտգեն ճառագայթման պարամետրով՝ օրինակ «Ռենտգեն սարքը պետք է ապահովի մեկ ժամում առնվազն 60 անխափան ճառագայթման հնարավորություն» կամ «Ռենտգեն սարքը պետք է ապահովի երկու ճառագայթումների միջև առավելագույնը 60վրկ տևողություն» կամ «Ռենտգեն ճառագայթումների արագագործությունը առավելագույնը 60 վայրկյանը մեկ» կամ այլ: Հետգրություն. Շատ կարևոր պարամետր է ռենտգեն գեներատորի հզորությունը. որքան հզոր՝ այնքան պատկերի որակը ավելի բարձր, և տեսանելիությունը/լուծելիությունը ավելի լավ: Օրինակ՝ 4կՎտ գեներատորի հզորությամբ ռենտգեն սարքով ճառագայթման արդյունքում գեր մարդու (դիցուք 120կգ-ից բարձր) թոքերի պատկերը ավելի անորակ կստացվի քան 5կՎտ հզորությամբ գեներատորինը: Այս մրցույթի հայտարարման օրվանից ի վեր ուսումնասիրել ենք այս տեսակի ռենտգենների ուղիղ 10 արտադրողների տարբեր մոդելներ: Օրինակ DRGEM կորեական ընկերության Jade մոդելի ռենտգեն սարքը լիովին բավարարում է ձեր կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերին: Jade-ի Անողի ջերմունակությունը, հենց 56,000ՋՄ է, բայց գեներատորի հզորությունը ընդամենը 4կՎտ է:


Պարզաբանում.

Տեղեկացնում են, որ «Անողի ջերմունակությունը, առնվազն՝ 56,000ՋՄ» և «Գեներատորի առավելագույն ելքային հզորություն (կՎտ)՝ առնվազն 4 կՎտ» տեխնիկական պարամետրերը նվազագույն անհրաժեշտ պարամետրերն են, որոնք քննարկվել են մասնագետների հետ և նշված պահանջների բավարարում են բազմաթիվ սարքավորումներ, ուստի Ձեր կողմից կարող են առաջարկվել նշվածներից ավելի բարձր պարամետրեր ունեցող սարքավորումներ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ վերոնշյալ պարամետրերը հանդիսանում են կարևոր պարամետրեր և դրանք պրակտիկորեն կիրառվում են բոլոր ռենտգեն սարքավորումների կիրառելիությունը գնահատելու համար և չափելի են: Ինչ վերաբերվում է «Անողի ջերմունակությունը, առնվազն՝ 56,000ՋՄ» պարամետրի փոփոխությանը Ձեր կողմից նշված ցուցանիշներով, ապա տեղեկացնում են, որ դա համարում ենք ոչ նպատակահարմար, քանի որ Ձեր կողմից նշված ցուցանիշներն պրակտիկորեն չափելի և գնահատելի չեն:


Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

Նիստը նախագահող՝




Ա. Զոհրաբյան

Հանձնաժողովի անդամ՝



Տ. Սարգսյան

Քարտուղար՝



Ա. Համբարձումյան